Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Խանջյան համայնքի
2019 թվականի փետրվարի 22-ին
Կայացած թիվ 1 նիստի N 4-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԽԱՆՋՅԱՆ 2019թ.

ԽԱՆՋՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



Համայնքապետի տեղակալը կատարում է համայնքապետի գործառույթները վերջինիս բացակայության ժամանակ:Համայնքի խորհրդականը օգնում և կատարում է համայնքի ղեկավարի հանձնարարությունները: Համայնքային ծառայողների աշխատանքը համակարգում և ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը: Աշխատակազմում ընդգրկված են ընդհանուր թվով 8 համայնքային ծառայողներ, որոնցից 3-ը ունեն բարձրագույն կրթություն և տեխնիկական աշխատողներ՝ գործավար, հավաքարար:

Համայնքի ենթակառույցներն են՝ Մշակույթի տուն, գրադարան, մանկապարտեզ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն
1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն
1.2 Կրոն ավանդույթներ և հանգսի զոտիներ
1.3 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
1.4 Տրանսպորտային ճանապարհներ և հեռահաղորդակցություն
1.5 կրթություն
1.6 Մշակույթ սպորտ և առողջապահություն
1.7 Հանրային ծառայություններ, սան մաքրում, շրջակա միջավայր և բնապահպանություն
1.8 Արդյունաբերություն, առևտուր և սպասարկում
1.9 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը
1.10 Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները
1.11 համայնքի թույլ կողմերը և խոչնդոտները
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Ծրագիր 1, Ծրագիր2, Ծրագիր 3, Ծրագիր 4, Ծրագիր 5, Ծրագիր 6,
4. ՀՀՊԾ ֆինանսավորում
5. ՀՀՊԾ Մոնիթորինգ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքպետարանի ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներին:
Շնորհակալություն Ձեզ հնգամյա զարգացման ծրագրի կազմումը և կատարումը գերակա համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,ֆինանսական, տնտեսական, բնական և մարդակային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:
Խանջյան համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիրն է մեր համայնքում,միջնակարգ դպրոցում, առնտրի սպասարկման օբյեկտներում, բյուջետային ենթակառույցներում:
Համայնքում 2019-23 թթ. Նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են. Փողոցային լուսավորության անցկացում, փողոցների խճապատում, ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգում, խորքային հորի կառուցում, մանկապարտեզի և ամբուլատորիայի վերանորոգում և այլն:
Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվեն բոլորը, դպրոցի յուրաքանչյուր մանկավարժ, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակույթային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիրակելու խնդիրը:Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:
Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրներն՝ ըստ առաջնահերթության: Լիահույս եմ, որ համատեղ ջանքերով կիրագործենք մեր բոլոր ծրագրերը:

Շնարհակալություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐՈՅԱՆ

ԳԼՈՒԽ 1

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1 ՊԱՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ

Արմավիրի մարզի Խանջյան համայնքը հիմնադրվել է 1958թվականին, տեղակայված է Արարատյան դաշտի հյուսիս-արևմտյան մասում, վարչական տարածքը կազմում է 782 հա, ծովի մակարդակից բարձր է 850 - 900մ: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 7, իսկ Երևանից՝ 50 կիլոմետր:
Կլիման չոր է,խիստ ցամաքային: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 9-11^0 C-ի սահմաններում: Շոգ օրերը տևում են ավելի քան չորս ամիս՝ ուղեկցվելով չոր եղանակներով:
Հուլիս և օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը կազմում է 25-30^0 C , իսկ առավելագույնը 41.5^0 C: Տարեկան տեղումները տատանվում են 250-350 մմ-ի սահմաններում:Ձմեռը չափավոր ցուրտ է , հունվարի միջին ջերմաստիճանը -4^0 C -ից -6^0 C է, նվազագույնը՝ -28^0 C:

1.2 ԿՐՈՆ, ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ

Համայնքի բացարձակ մեծամասնությունը հայ առաքելական եկեղեցու հետևորդներն են: Համայնքի տարածքում գործող եկեղեցիներ չկան: Բնակչությունը ձևավորված լինելով հիմնականում Սասնո գավառից գաղթված՝ նախկին Թալինի շրջանի Պարտիզակ գյուղի վերաբնակեցված և շրջակա գյուղերից տեղափոխված ընտանիքներով՝ պահպանել և շարունակում է Սասուն աշխարհի լավագույն տրադիցիաները:Իրենց ավանդույթների և սովորույթների համադրմամբ համայնքի կոլորիտին յուրահատուկ երանգներ են հաղորդում նաև բնակչության զգալի մասը կազմող Իրանից, Սիրիայից ներգաղթված, Ախալքալակից և հարակից գյուղերից տեղափոխված բնակիչները:
Գյուղի կենտրոնում կան երկու բլրակներ, որոնք իրենց օղակաձև տեսքով և համայնքի կողմից բարեկարգման արդյունքում (1.5 հա-ի վրա) ձևավորվել է կանաչապատ պուրակ կենտրոնում գտնվող կուլտուրայի տան շրջակայքում:Պուրակում պարբերաբար կազմակերպվում է ծառատունկ, խնամքի աշխատանքներ, Խաչքար հուշարձանի, Աղասի Խանջյանի արձանի շրջակայքում և ողջ պուրակում:

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 2084 անձ, որից 1106 տղամարդ և 978 կին: Կյանքի միջին տևողությունը 75 տարի է: Համայնքում կան նաև ազգային փոքրամասնություն կազմող բնակիչներ՝ եզդիներ շուրջ 5%:

Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն	45494.2
2	Սեփական եկամուտների բաժինը	30%
3	Պտղի արտադրություն	2800տոննա
4	Խաղողի արտադրություն	1200տոննա
5	Բանջարեղենի արտադրություն	500տոննա
6	Խոշոր եղջերավոր անասուններ	1300գլուխ
7	Ոչխարներ, այծեր	3558գլուխ
8	Հիմնական դպրոց	244աշակերտ
9	Բուժ ամբուլատորիա	5 անձ
10	"Փարոս" համակարգի շահառուններ	41 ընտանիք

Համայնքի բնակչության ընդհանուր թվից 231-ը կենսաթոշակառուներ են՝ այդ թվում 47-ը հաշմանդամության կարգ ունեցողներ: 163 անձինք գտնվում են արտերկրում աշխատելու, սովորելու, բուժման և այլ նպատակներով:

Գյուղատնտեսության բնագավառում ինքնազբաղված բնակչությունը կազմում է 996 մարդ:Կրթության բնագավառում աշխատում են 48-ը, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ 12-ը, առողջապահության և սոցիալական ծառայության բնագավառում 8-ը, կապի, տրանսպորտի շինարարության, հանրային ծառայությունների մատուցնում և այլ ոլորտներում աշխատում են շուրջ 32 անձինք:
Համայնքն ունի պտղախաղողագործական ուղղություն զարգացած բանջարաբուծությամբ, անասնապահությամբ: Գյուղատնտեսական մթերքներն իրացվում են հանրապետության շուկաներում, խաղողի մթերակայաններում, "Սպայկա" և այլ ընկերությունների միջոցով արտահանվում է արտերկիր:Համայնքում չկան վերամշակվող գործարաններ, չրանոցներ: Առկա են սառնարանային տնտեսություններ և ջերմատներ, պտղի վերամշակման կայանը չի գործում:Համայնքում շուրջ 250 ընտանիք զբաղվում են անասնապահությամբ և որից ստանում են բարձր եկամուտ: Շնորհիվ ոռոգման ջրի բավարար առկայության համայնքում ապահովված է նաև կերային բազան:

1.4 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքը մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ կապված է ավտոբուսային երկաթուղիներով:Համայնքում առկա է շուրջ 22700 քմ ասֆալտապատ ճանապարհ, որից շուրջ 5000 քմ -ը վնասված են վերանորոգման կարիք կա: Կան նաև գրունտային ներհամայնքային փողոցներ՝ հատկապես նոր թաղամասերում և որոնք ասֆալտապատման կարիք ունեն: Հեռահաղորդակցությունը համայնքում իրականացված է հետևյալ կազմակերպությունների կողմից

1. Beeline AM (բջջային և ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ)
2. Viva cell MTS (բջջային և ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ)
3. Ucom(հեռախոսակապ և ինտերնետ)
4. Arpinet(ինտերնետ)

5. REALITIME(Փոստային ծառայություններ:)Համայնքում հասանելի են անսահմանափակ հեռուստատեսային և ռադիո ալիքներ:

1.5ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում դպրոց չհաճախող երեխաներ չկան:Համայնքի միջնակարգ հիմնական դպրոցը 2015 թվականին անվանակոչվեց ազատամարտիկ՝ դպրոցի նախկին մանկավարժ Արմեն Բենյամինի Հակոբյանի անվամբ:

16 և ավել տարիքի բնակչության գրագիտությունն ըստ կրթական մակարդակի

1. Տարրական կրթություն ունեցողներ _ 32 մարդ
2. Հիմնական կրթություն ունեցողներ _ 248 մարդ
3. Միջնակարգ կրթություն ունեցողներ _ 955
4. Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեեցողներ_68
5. Բարձրագույն կրթություն ունեցողներ -77
6. Առանց պարտադիր կրթության _18

Համայնքի նախադպրոցական հաստատությունը չի գործում վթարային վիճակում գտնվելու պատճառով:

1.6ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում պարբերաբար կազմակերպվում են մշակույթային միջոցառումներ դպրոցում և գրադարանում, նշվում են հատկապես տոնների և հիշատակի օրերը, կազմակերպվում են սպորտային մրցաշարեր:Համայնքում ավանդական է դարձել զոհված և անհետ կորած ազատամարտիկների հիշատակին նվիրված թեթև աթլետիկայի միջազգային մրցաշարը, որն անցկացվել է արդեն 10 տարի: 2 տարի այն ընդհատվել է, սակայն վերականգնվելու է:

Պարբերաբար անցկացվում են նաև շախմատի մրցաշարեր: Համայնքում գործող բուժամբուլատորիան 5 հոգուց բաղկացած անձնակազմով հնարավորինս պատշաճ կազմակերպվում է առողջապահական խնդիրներ ունեցող բնակիչների սպասարկումը, սակայն շենքային պայմանների վատթար վիճակը հաճախ առիթ է հանդիսանում, որ բնակիչները ստիպված մեկնեն մարզկենտրոնի բժշկական հիմնարկներում բուժվելու:

ԽԱՆՋՅԱՆԻ ԲՈՒԺ. ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ

ՏՆՕՐԵՆ	ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿ	ԲՈՒԺՔՈՒՅՐ	ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐ
1	1	2	1

1.7ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԱՆՄԱՔՐՈՒՄ, ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքը կոյուղացված չէ:

Համայնքում կազմակերպված է կանոնավոր աղբահանություն:Այս աշխատանքները կազմակերպում է համայնքապետարանը պայմանագրային հիմունքներով մասնագիտացված կազմակերպության միջոցով: Հավաքված աղբն տեղափոխվում է համայնքից 500մ

հեռավորության վրա գտնվող առանձնացված աղրավայր:Խանջյան համայնքը գտնվելով կիսաանապատային գոտում, բնականից աղքատ է կանաչապատ տարածքներից:Համայնքի ողջ շրջակայքում և տնամերձներում մշակվող պտղատու ծառերը և խաղողի տարածքները լիովին ապահովում են անտառածածկ տարածքի տպավորությունը:

1.8ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի տարածքում գործում է 4 խանութ: Հիմնականում կարգավորված են այդ խանութների ծխախոտի և ալկոհոլի վաճառքի թույլտվությունները: Համայնքի բնակչությունը զբաղվում է առևտրով, գյուղատնտեսական մթերքների ոլորտում:
Համայնքում բացակայում են կենցաղային սպասարկման ծառայությունները:

1.9 ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Մշակույթի տուն (գրադարան) -1
2. Մանկապարտեզի շենք -3
3. Համայնքապետարանի շենք (փոստ) -1
4. Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ (տրամադրվել է անհատույց օգտագործման)
5. Ներհամայնքային ոռոգման համակարգ (տրամադրվել է անհատույց օգտագործման)
6. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
7. Հուշարձան 1
8. Գերեզմանատուն 1
9. Բուժ. Ամուլատորիա 1
10. Դպրոց 1
11. Համայնքի վարչական տարածք 782 հա

1.10 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

-Կրթված աշխատուժ
-Գյուղական հանգիստ և ապահով միջավայր
-Որակյալ աշխատուժ
-Երկաթգծին, մարզկենտրոնին, սպառման շուկաներին մոտ գտնվել:
-Ենթակառուցվածքների առկայություն (գազ, ջուր, էլեկտրականություն)
-Ոռոգման ջրի բավարար առկայություն
-Խմելու ջրի բավարար քանակություն
-Ակտիվ և թափանցիկ գործող, բնակչության վստահությունը վայելող տեղական ինքնակառավարման մարմին:
-Միջնակարգ կրթության ստանալու լիակատար հնարավորություն:

1.11 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

-Զբաղվածության ցածր մակարդակ
-Մթնոլորտ-մանկապարտեզի բացակայություն:
-Աղքատության բարձր մակարդակ
-Մասնատված հողակտորներ ունենալու հանգամանք:
-Ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը
-Վերամշակող ձեռնակությունների բացակայություն:
-Բնական աղետներից՝ (ցրտահարության, կարկտահարության, ջրածածկում տուժելու բարձր ռիսկայնություն):

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը.
Ա)Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակույթային վիճակը և հանգստի պայմանները, զյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:
Բ)Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:
Գ)Գյուղատնտեսական կայուն զարգացում:
-Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում, ասֆալտապատում
-Գիշերային լուսավորության ցանցի անցկացում ողջ համայնքում:
-Ոռոգման ցանցի վերանորոգում, խորքային հորի կառուցում, եղածների նորոգում:
-Սպորտ հրապարակների կառուցում, մանկապարտեզի շենքի վերանորոգում, հակակարկտային կայանների տեղադրում:
-Ջերմոցային տնտեսության , չրանոցների, սառնարանային տնտեսությունների հիմնում:
-Բուժ. Ամբուլատորիայի կառուցում կամ վերանորոգում:

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ 2019-2023 ԹԹ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԾՐԱԳԻՐ 1

ՆԱԽԿԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՆՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Համայնքի նախկին մանկապարտեզի շենքի վերանորոգում, ցանկապատի և խաղահրապարակի կառուցում, բակի կանաչապատում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր մանկապարտեզահասակ երեխաներին հնարավորություն կտրվի հաճախելու մանկապարտեզ:
Համայնքի զգալի թվով ընտանիքների կտրվի աշխատանքի հնարավորություն:

- Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ. ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 2
ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 12 կմ-ից ավելի, որից 2.5 կմ-ն կենտրոնական ճանապարհն է, որը բարվոք վիճակում է:Ասֆալտապատ փողոցների մնացած մասը գրեթե շարքից դուրս է եկել և խիստ վերանորոգման կարիք է զգացվում: Հաշվի առնելով բնակչության առաջարկը անհրաժեշտություն է առաջացել վերանորոգել ասֆալտապատ և շերենապատել գյուղի որոշ փողոցներ, հատկապես նորաստեղծ թաղամասերում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- Ապահովել տրանսպորտային միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին
- Վերացնել փողոցների ջրափոսերը
- Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2019-2023թթ.

ԾՐԱԳԻՐ 3
ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Համայնքում գիշերային լուսավորությունը գործում էր մինչև 1992թվականը, որից հետո ամբողջ ենթակառուցվածքը շարքից դուրս է եկել:
Հաշվի առնելով բնակչության բազմաթիվ դիմում առաջարկները, այս հնգամյա ծրագրում նախատեսվել է համայնքի գիշերային լուսավորության անցկացում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- Վերականգնել համայնքի փողոցների լուսավորությունը:
- Համայնքի լիարժեք լուսավորությունը ապահովելու համար նախատեսվում է լուսավորությունը համայնքի 1-ին, 2-րդ, 5-րդ, 13-րդ 15-րդ փողոցներում:Հետագայում ըստ տարիների լուսավորել ողջ համայնքը:
- 2019 թ.-ին նախատեսվում է ձեռք բերել 80 հատ հենասյուն, 120 հատ լուսատու, 5750մ մալուխ և նհրաժեշտ քանակի միակցման դետալներ:
- Ամբողջական ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ.:

ԾՐԱԳԻՐ 4
ԲՈՒԺ. ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում նոր տիպային ամբուլատորիայի շինարարություն՝ բակի վերակառուցում, բակի կանաչապատում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ զգալի կբարելավվի համայնքի բնակչութանը ամբուլատոր բժշկական ծառայության մատուցման որակը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ. ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 5
ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ) ՄԵԿ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խանջյան գյուղի ոռոգման համակարգը կառուցվել է 1984-85-ական թվականներին և պարբերաբար վերանորոգվել:Ջրազծի երկարությունը կազմում է 5.5 կմ: Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսական միջոցների աղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 30 տարվա վաղեմություն ունեցող մաշված կիսախողովակների առանձին հատվածներ:Համայնքի հրատապ խնդիրներից է ջրազծերի մասնակի վերանորոգումը և մեկ խորքային հորի կառուցումը՝ ապահովելով սեզոնային անխափան ջրամատակարարումը, ողջ տարածքի և ջրթողից հեռու գտնվող շուրջ 50 հա դժվար ջրվող տարածքների համար:

ԾՐԱԳԻՐ 6
ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում 2 հակակարկտային "ԶԵՆԻԹ" կայաների տեղադրում: Քանի որ, տնտեսությունում հաճախ տեղացող կարկուտը մեծ վնաս է հասցնում գյուղատնտեսական մշակաբույսերին և երբեմն բերքի կորուստը կազմում է մինչև 100%, ուստի հաշվի առնելով բնակչության կողմից բազմիցս արվող առաջարկությունները , ծրագրում ներառվում է հակակարկտային կայանների տեղադրումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է

- Ապահովել բերքի ստացման կայուն երաշխիք՝ գյուղատնտեսության նկատմամբ հավատի և վստահության բարձրացում:
- Նախատեսվում է 2 "ԶԵՆԻԹ" հակակարկտային կայանների տեղադրում, որոնք կապահովեն շուրջ 100 հա- ի ծածկույթ:

Ծրագիրը նախատեսվում է իրազործել 2019-2023թթ. ընթացքում:

ՄԻՆԻՄԱԼԱԿԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ

Խաչջրան համայնքի (2019-2023թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Տարածքի փաստացի արժեք (2017)	Տարածքի կանխատեսելի արժեք (2018)	Տարածքի փաստացի արժեք (2018)	Տարածքի կատարողականը % (2018)	Տարածքի թիրախային արժեք (2020)	Տարածքի փաստացի արժեք (2020)	Տարածքի կատարողականը % (2020)	Տարածքի թիրախային արժեք (2021)	Տարածքի փաստացի արժեք (2021)	Տարածքի կատարողականը % (2021)	Տարածքի թիրախային արժեք (2022)	Տարածքի փաստացի արժեք (2022)	Տարածքի կատարողականը % (2022)	Տարածքի թիրախային արժեք (2023)	Տարածքի փաստացի արժեք (2023)	Տարածքի կատարողականը (2023)	Ցուցանիշի հաշվարկման պարբերականությունը		Տարածքի տվյալների աղբյուր	Տարածքի անցման միջոց
																		Փաստացի	Նորմատիվ		
Համայնքի կայուն զարգացում																					
Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)		10%	9.5		9			8.5			8.0			8.5				8.5	X	Մարզպետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով		1%	1.1%		1.2			1.5			1.8			2				2	X	Համայնքի ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, հաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի արտաքսով		1%	1%		1			2			2			2				2	X	22 Ընտիկա հարցում	Հարցում
1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում																		100	100		
2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում		100%	100		100			100			100			100							
3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն																					
Սոցիալացված նախադպրոցական հաստատություն (այն համայքներում, որտեղ առանձին նախակրթարան չկա)																			X	Համայնք ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով		5%	5		20			50			100			100				100	X	Համայնք ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Մոտների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից		0%	0		20			50			100			100				100	100	Նախադպրոցական	Հարցում կամ խմբային
Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով		0%	0		0			0			0			0				0	X	Համայնք ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Մոտների բավարարվածությունը արտադպրոցական կրթությունից		0%	0		0			0			0			0				X	0	Արտադպրոցական հաստատություն	Հարցում կամ խմբային հարցազրույց
4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում երիտասարդության ներգրավմամբ																					
Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ		3	3		4			5			6			8				8	X	Համայնք ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայքում գործող մշակութային խմբակների թիվ		1	1		2			3			3			3				3	X	Համայնք ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայքի երեխաների ու պատանիների թվին արտահայտված տոկոսով		5%	2		4			10			10			10				10	X	Համայնք ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

Մոգերի բավարարվածությունը մշակույթի խմբակներից		35%	30			50			80			80			90			X	60	Սիրաշատ պրոցեսում հասան	Շարքում կամ խմբային հարցազ
Համակարգչային միջոցներով կազմակերպված երեխաների և պատանիների զբաղվածություններ համայնքից դուրս մշակութային օջախներ		0	0			2			2			3			3			1	X	Համակարգակետ բան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
Համակարգչային միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ		1	2			2			3			3			4			2	X	Համակարգ պահանջ-բան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
Համայնքային զբաղարանն ինտերակտիվ էլեկտրոնային գրադարանի առկայություն		1	1			1			1			1			1			1	X	Համակարգ ապնուա-բան	Դիտարկում
Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով		2%	2			2.1			2.3			2.4			2.5			2	X	Գրադարան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն		25%	25			24			23			22			21						
6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խթանումը																					
Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ		1	1			1			2			2			3			2	X	Համակարգ ապետա-բան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների և պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների և պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով		2%	2			2			4			4			6			3	X	Համակարգ ապնուա-բան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
Մոգերի բավարարվածությունը մարզական խմբակներից		30%	30			30			60			60			90			X	60	Սիրաշատ խմբակնե-ր	Հարցում կամ խմբային հարցազ
7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը																					
Համայնքում կառուցված շենքերի մակերես		500մ²	500			50			600			650			700			350	X	Համակարգ ապետա-բան	Փաստաթղթային
Համայնքապետարանում հաշվառված շինարարական պարմանների բարելավման կարիք ունեցող բնակիչների թվի հարաբերությունը համայնքի տնային տնտեսությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով		0%	0			0			0			0			0			0	X	Համակարգ ապնուա-բան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
8. Համայնքի բնակավայրերի էլեկտրաֆիկացումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության ծառայությունների ապահովումը, համայնքային վերելակահանների պահպանումը և գործունեության ապահովումը																					
Համայնքի գլխավոր հատակագծի առկայության		այո	այո			այո			այո			այո			այո			այո	X	Համակարգ ապետա-բան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով		90%	80			100			100			100			100			100	X	Համակարգ ապնուա-բան	Փաստաթղ-թային ուսումն ասիրություն

Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն		այո	այո		[redacted]			այո		այո	[redacted]			այո			այո	Y	Համայնքի ապետարան	Պատասխանատու անձանց
Գետաբաժանման գծագրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով		90%	80		100			100		100				100			100	X	Համայնքի ապետարան	Փաստաթղթի ուսումնասիրություն
Համասեփականությունների կողմից սպասարկվող բնակելի մակերեսի հարաբերությունը համայնքի կողմից սպասարկվող բնակելի մակերեսին, արտահայտված տոկոսով		0%	0		0			0		0				0			0	X	Համայնքի ապետարան/հանձնարարություններ	Փաստաթղթի ուսումնասիրություն
Համայնքում հավաքված և աղբավայրերում տեղադրված աղբի հարաբերությունը համայնքում առաջացող ամբողջ աղբին, արտահայտված տոկոսով		90%	100		100			100		100				100			100	X	Համայնքի ապետարան/մասնավոր ոլորտ	Խորքային հարցազրույց
Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբերությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին, արտահայտված տոկոսով		8%	8		8.5			9.5		9.7				10			5	X	Համայնքի ապետարան/մասնավոր օպերատորներ	Հարցում/խորքային հարցազրույց
Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանությունից և սանիտարական մաքրումից		95%	100		100			100		100				100			X	100	Համայնքի բնակիչներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքի բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարումից և ջրահեռացումից		80%	90		85			90		100				100			X	100	Համայնքի բնակիչներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքի բնակիչների բավարարվածությունը առգեան ջրի մատակարարումից		80%	90		90			95		100				100			100	100		Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքի բնակիչների բավարարվածությունն աղբահանությունից և սանիտարական մաքրումից		95%	100		100			100		100				100			X	100	Համայնքի բնակիչներ	Հարցում
Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ, արտահայտված տոկոսով		2%	3		4			5		6				7			4	X	Համայնքի ապետարան	Փաստաթղթային ուսումն
Գերեզմանատների համապատասխանությունը հատակագծին (ցանկերն՝ գերեզմանատան հատատված տարածքից դուրս գերեզմանների չի հատկացվում)		այո	այո		այո			այո		այո				այո			այո	X	Համայնքի ապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում																				
Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից		95%	100		100			100		100				100			X	100	Համայնքի բնակիչներ	Հարցում

Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն ամբողջական ճանապարհային նշանների, արտահայտված տոկոսով		75	80		100		100		100		100				100	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում կանոնակարգված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին		60%	60	60		100		100		100					100	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի սպասարկող հասարակական տրանսպորտի պարկում 5 և ավելի տարի հնություն ունեցող մեքենաների հարաբերությունն ավտոպարկի մեքենաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով																X	Համայնքապետարան/ուղեղարափոխադրում ներ իրական ոլորտ	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցում
Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով		2%	2		4		4		5		5				2.5	X	Համայնքապետարան/շինարարության-ության իրական ոլորտ բնակիչներ	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցում
10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը																				
Համայնքում չնկնող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում		այո	այո			այո		այո		այո		այո			այո	X	Համայնքապետարան/տնտեսական	Փաստաթղթային ուսումնասիրություն
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում		այո	այո			այո		այո		այո		այո			այո	այո				
12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանում																				
Համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների նկատմամբ տարեկան աճ		2%	3		3		3		4		5				3	X	Գյուղատնտեսություն	Հարցում կամ խմբային
Բերքատվության տարեկան աճ		2%	3		3		3		4		5				100	X	Համայնքապետարան	Հարցում
Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերին արտահայտված տոկոսով		95%	98		100		100		100		100					X	Համայնքապետարան/ՋՕԼ	Հարցում
13. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն															60					
Համայնքում հիերարխիանալ լամկերով լուսավորվող տարածքի հարաբերությունը ընդհանուր լուսավորվող տարածքին, արտահայտված տոկոսով		0%	30		30		30		60		60				30	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի կազմակերպած ծառատունկի ժամանակ տնկված ծառերի կենսունակություն, արտահայտված տոկոսով		60%	80		80		80		80		90				2	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի մաքրման շարժընթացներ		2	3		4		4		4		4					X	Համայնքապետարան	Փաստաթղթային
14. Զբոսաշրջային ներուժներ ունեցող համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանում																				

Զրուցարան-գրադարանի ելակետ տարածքի տեսակարարությունների աճ նախորդ տարվա համեմատ	0%	0		0		0				0				0	X	Զրուցարանի գրքերի թվի ելակետ	Զրուցարանի գրքերի բաց/փակ կուտ
Հանձնի ստեղծած զրուցարանների թվաքանակի աճ նախորդ տարվա համեմատությամբ	0%	0		0		0				0				0	X	Զրուցարանների, տարբերակ տական	Զրուցարանի բաց/փակ կուտ
15. Հանձնի էներգաարդյունության խնայողության ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում																	
Հանձնի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ	1%	2		3		3				4				2	X	Հանձնի ապետարան	Փաստաթղթային ուսումն
16.Հանձնում ծնելիության և բազմազավակության խթանում																	
Հանձնում ծնելիության աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1%	1		1.2		1.3				1.4				1.5	X	ԿՈՎ բաժ	Հարցում
2 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1%	1		1.2		1.2				1.2				1.2	X	Հանձնի ապետարան	Փաստաթղթային ուսումն ասիրություն
17.Հանձնում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում																	
Ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության նվազում նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսներով	1%	1		2		2.5				3				4	X	Հանձնի ապետարան, հանձնի	Փաստաթղթային ուսումն ասիրություն
Հանրային ենթակայության բուժական հիմնարկի կողմից այլ բուժական հիմնարկներ ուղղորդված այցելուների քանակի նկատմամբ նախորդ տարվա համեմատ	1%	1		2		2.5				3				4	X	Բժշկական հաստատություններ	Հարցում կամ հարցազրույց
18. Հանրային հասարակական կյանքին հաշվանդամների մասնակցության խթանում						1				1				2			
Հանրային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձիք (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս)	2%	2		1		13				14				16	X	Հաշմանդամություն ունեցող անձիք	Խմբային հարցազրույց/փակ կուտ խումբ
Հանրային կյանքում կազմակերպվող միջոցառումներին մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց թվի (որպես հաշմանդամություն ունեցող անձանց տոկոս)	10%	10		12											X	Հաշմանդամություն ունեցող անձիք	Խմբային հարցազրույց/փակ կուտ խումբ
19. Բարեգործության խթանում																	
Բարեգործական նպատակներով հանգանակված գումար հաշվարկված որպես համայնքի սեփական եկամուտների տոկոս	0%	0		0		1				1				1	X	Հանձնի ապետարան/բարեգործա	Հարցում կամ հարցազրույց
Համայնքի կողմից կազմակերպված բարեգործական միջոցառումների քանակ	2	3		6		3				4				6	X	Հանձնի ապետարան	Փաստաթղթային ուսումն
Տուգանք 1																	
Տուգանք 2																	
Տուգանք 3																	

15

4.ՀՀՀԶԾ ֆինանսավորում

Խանջյան համայնքի 2019թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները հաշվարկել է 45494.2 ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ՝ սեփական եկամուտները 17716.3 ՀՀ դրամ:

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը, որը Արմավիրի մարզի Խանջյան համայնքում ունի հետևյալ պատկերը.

հ/հ	Եկամուտների տեսակը՝	2018 կատարող	2019 նախատեսված	2020 նախատեսված	2021 նախատեսված	2022 նախատեսված	2023 նախատեսված
1.	Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	43778.0	45494.2	46397.9	47017.9	47565.0	48302.0
2	Եկամուտներ	14640.9	17716.3	18620.0	19240.0	19785.0	20520.0
2.	Ընթացիկ եկամուտներ	-	-	-	-	-	-
1.	Հարկային եկամուտներ	14440.5	16216.3	16620.0	17020.0	17370.0	18020.0
1.	Հողի հարկ	9050.5	10373.5	10500.0	10800.0	11000.0	11500.0
1.	Գույքահարկ	467.0	5122.8	5400.0	5500.0	5650.0	5800.0
1	Գույքահարկ համայնքի տարածքում շենք շինությունների համար	720.0	720.0	720.0	720.0	720.0	720.0
1.	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-
2.	Տուրքեր և վճարներ	200.0	700.0	800,0	870.0	935	1000.0
2.	Տեղական վճարներ	-	300.0	350.0	370.0	385.0	400.0
2.	Տեղական տուրքեր	200.0	400.0	450.0	500.0	550.0	600.0
3.	Ոչ հարկային եկամուտներ	1055.9	800.0	1200.0	1350.0	1480.0	1500.0
3.	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձված գումարներ	600.0	800.0	1200.0	1350.0	1480.0	1500.0
3.	Այլ եկամուտներ	455.9	-	-	-	-	-
3.	Պաշտոնական ընթացիկ տրանսֆերներ(դոտացիա)	27781.9	2777.9	2777.9	27777.9	27780.0	27782.0

5.ՀՀԶԾ մոնիտորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիտորինգը գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել:Մոնիթորինգն իրականացնում են համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արդյունքների հետ համեմատելու միջոցով:Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրերի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները և փաստացի գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը:Մոնիթորինգն առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությունը, որպեսզի հնարավոր լինի ձեռքը պահել Ծրագրի <<զարկերակի>> վրա: